

ՄԻԱՅԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՅ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԵՒ

ԳԻՒՂԱՏՆԱՏ, ԴԱՄԸՆԹԱՑՔԻ ԴԱՍԱԳՐՔԻՆ



1909

Տպ. գ. եւ ձ. ՏԵՐԱՆԻՐԱԷԾԵԱՆ

Գ. ՊՈԼԻՍ

375

Մ-67

С 0 PM-4  
5991

06 APR 2010

375

5-67

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՅ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԵՒ

ԳԻՒԼԱՏՆՏ, ԴԱՍԸՆԹԱՑՔԻ ԴԱՍԱԳՐՔԻՆ

4/17 Յուլիս, 1909



Տպ. վ. եւ ձ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

Կ. ՊՈԼԻՅ

28 JUN 2013

53777



58911-67

## ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

### ՈՒՍՄԱՆՑ ԾՐԱԳԻՐ

Ա. ՏԱՐԻ

#### Շարաքը

|    |     |                                                           |
|----|-----|-----------------------------------------------------------|
| 2  | Ժամ | Բնագիտություն                                             |
| 2  | »   | Հանգային Բնալուծություն                                   |
| 2  | »   | Բուսաբանություն                                           |
| 2  | »   | Կենդանաբանություն                                         |
| 1  | »   | Երկրաչափություն                                           |
| 3  | »   | Ընդհ. Հողագործություն եւ Մշակություն<br>երկրագործ. բուսոց |
| 12 | »   |                                                           |

Բ. ՏԱՐԻ

#### Շարաքը

|    |     |                                                                              |
|----|-----|------------------------------------------------------------------------------|
| 2  | Ժամ | Գործարանային Բնալուծություն                                                  |
| 1  | »   | Բուսական Կենսախօսություն                                                     |
| 1  | »   | Անդաշափություն                                                               |
| 2  | »   | Հանքաբանություն եւ Երկրաբանություն                                           |
| 3  | »   | Բանջարամշակություն, Ծառամշակություն,<br>Այգեմշակություն եւ Անասնաբուծություն |
| 2  | »   | Գիւղատնտեսական հասարակական                                                   |
| 11 | »   |                                                                              |

## Գ. ՏԱՐԻ

### Շաբաթը

|    |     |                                                                         |
|----|-----|-------------------------------------------------------------------------|
| 2  | ժամ | Հողագործական Բնալուծութիւն                                              |
| 1  | »   | » Տոմարակալութիւն                                                       |
| 1  | »   | » Աւխարհագրութիւն                                                       |
| 2  | »   | Քաղաքական եւ Երկրագործ. Տնտեսագի-<br>տութիւն                            |
| 1  | »   | Առողջաբանութիւն                                                         |
| 3  | »   | Մեղուաբուծութիւն, Շերամաբուծութիւն,<br>Անասնաբուծութիւն, Հաւաբուծութիւն |
| 1  | »   | Երկրագ. Օրէնդութիւն                                                     |
| 11 | »   |                                                                         |

1. Հողագործութեան եւ Գիւղատնտեսական ճարտարութեան դասերը, երեք տարեշրջանի մէջ ալ, ընդ ամենը շաբաթական 11 ժամով, պիտի աւանդուին Տնօրէնին կողմանէ:

2. Բնագիտութեան, Բնալուծութեան, Բուսական Կենսաբանութեան, Հանքաբանութեան, Երկրաբանութեան, Տոմարակալութեան եւ Քաղաքական Պարսկանութեան դասերը, ընդ ամենը շաբաթական 14 ժամով, պիտի տրուին Ա. Ուսուցչին կողմանէ:

3. Բուսաբանութեան, Կենդանաբանութեան, Երկրաչափութեան, Անդաշափութեան, Աւխարհագրութեան եւ Առողջաբանութեան դասուց աւանդումն ալ, ընդ ամենը շաբաթական 8 ժամով, կը պատկանի Բ. Ուսուցչին:

## ՏԱՐԵԿԱՆ ՊԻՒՏՃԷ

### Ա. Տարի

#### Ամսաթոշակ

|                                 |       |         |      |          |
|---------------------------------|-------|---------|------|----------|
| Տնօրէն եւ Ընդհ. Հսկող Գիւղատնտ. |       |         |      |          |
| աւխատութեան                     | Ամիսը | Դհ. Ոս. | 1500 | էն 18000 |
| Ա. Ուսուցիչ եւ Պէտ Գիւղատնտ.    |       |         |      |          |
| աւխատութեան                     | »     | »       | 1000 | » 12000  |
| Հսկող եւ Բ. Ուսուցիչ            | »     | »       | 600  | » 7200   |
| Խոհարար                         | »     | »       | 100  | » 1200   |
| Լուացարար եւ Խոհարարի           |       |         |      |          |
| Օգնական                         | »     | »       | 50   | » 600    |
| Սպասաւոր                        | »     | »       | 50   | » 600    |
| Պարսիկպան                       | »     | »       | 200  | » 2400   |
|                                 |       | Գումար  |      | 42000    |

#### Ուսեւ եւ այլնայլ ծախսեր

|                                                     |    |         |         |
|-----------------------------------------------------|----|---------|---------|
| 10 աւակերսի սնունդը, ամսական 60                     | էն | Դհ. Ոս. | 7200    |
| 7 պատճոնի եւ ծառայի սնունդը, 90                     | էն | »       | » 7560  |
| 10 աւակերսի հագուստը եւ ներմակեղերը,<br>տարեկան 300 | էն | »       | » 3000  |
| Գրեմական պիտոյք, ամսական 250                        | էն | »       | » 3000  |
| Վառելիք                                             |    | »       | » 2400  |
| Լուսաւորութեան ծախս                                 |    | »       | » 1360  |
| Լուսցի ծախս, ամսական 100                            | էն | »       | » 1200  |
| Մանր ծախսեր, » 200                                  | էն | »       | » 2400  |
|                                                     |    | »       | » 28120 |

## Ա. Տարուան ծախս

|                      |           |              |
|----------------------|-----------|--------------|
| Ամսաթուակաց համար    | Դան. Ոսկի | 42000        |
| Ուսեսի եւ այլ ծախուց | » »       | 28120        |
| Համագումար           | » »       | <u>70120</u> |

## Բ. Տարի

|                                                    |           |              |
|----------------------------------------------------|-----------|--------------|
| Նոյն պատճոհեութիւն, տարեկան                        | Դան. Ոսկի | 42000        |
| 20 աշակերտի սնունդը, ամիսը 60էն                    | » »       | 14400        |
| 7 պատճոհեի եւ ծառայի սնունդը, ամիսը 90էն           | » »       | 7560         |
| 20 աշակերտի հագուստը եւ ներմակեղէնը, տարեկան 300էն | » »       | 6000         |
| Գրեմական պիտոյք, ամսական 325էն                     | » »       | 3900         |
| Վառելիք                                            | » »       | 3000         |
| Լուսաւորութեան ծախս                                | » »       | 1540         |
| Լուացքի ծախս, ամսական 125էն                        | » »       | 1500         |
| Մանր ծախսեր, » 200էն                               | » »       | 2400         |
| Գումար                                             |           | <u>40300</u> |

## Բ. Տարուան ծախս

|                            |           |              |
|----------------------------|-----------|--------------|
| Ամսաթուակաց համար          | Դան. Ոսկի | 42000        |
| Ուսեսի եւ այլ ծախուց համար | » »       | 40300        |
| Համագումար                 |           | <u>82300</u> |

## Գ. Տարի

|                                                    |           |              |
|----------------------------------------------------|-----------|--------------|
| Նոյն պատճոհեութիւն տարեկան                         | Դան. Ոսկի | 42000        |
| 30 աշակերտի սնունդը, ամսական 60էն                  | » »       | 21600        |
| 7 պատճոհեի եւ ծառայի սնունդը, ամսական 90էն         | » »       | 7560         |
| 30 աշակերտի հագուստը եւ ներմակեղէնը, տարեկան 300էն | » »       | 9000         |
| Գրեմական պիտոյք, ամսական 350էն                     | » »       | 4200         |
| Վառելիք                                            | » »       | 3600         |
| Լուսաւորութեան ծախս                                | » »       | 1640         |
| Լուացքի ծախս, ամսական 150էն                        | » »       | 1800         |
| Մանր ծախսեր, » 200էն                               |           | 2400         |
| Գումար                                             |           | <u>51800</u> |

## Գ. Տարուան ծախս

|                           |           |              |
|---------------------------|-----------|--------------|
| Ամսաթուակաց համար         | Դան. Ոսկի | 42000        |
| Ուսեսի եւ այլեւայլ ծախուց | » »       | 51800        |
| Համագումար                |           | <u>93800</u> |

Ա. Բ. եւ Գ. Տարիներու յատուկ միանուագ  
տեղի ունենալիք ծախուց ցուցակը

## Ա. ՏԱՐԻ

Դասարանի կանկարատի (գրասեղան, վառարան,  
արթոն, բնական Պատմութեան եւ Հողագոր-

|                                                                                              |              |
|----------------------------------------------------------------------------------------------|--------------|
| ծութեան յասուկ խախտակներ                                                                     | Գ. Ո.        |
| Ննջարանի կահկարասի (մահնակալ, անկողնոյ կազմած, եւն.)                                         | 2600         |
| Ճաշարանի կահկարասի (սեղան եւ սեղանի սպաս)                                                    | 3000         |
| Խոհանոցի կահկարասի (պղինձէ ամաններ, արձուներ)                                                | 1000         |
| Տնօրէնութեան եւ պատշտօնէից սենեկի կահկարասի (գրասեղան, մահնակալ, դարակ, կապեռս, արձու, եւն.) | 1400         |
| Առակերաց համար պէտք եղած ձեռքի գործիք եւ երկրագործ. անհրաժեշտ մեքենաներ                      | 2500         |
|                                                                                              | 10000        |
| <b>Գումար</b>                                                                                | <b>20500</b> |

#### Բ. ՏԱՐԻ

|                                             |             |
|---------------------------------------------|-------------|
| Դասարանի կահկարասի (մանրամասնութիւնք վերեւ) | Գ. Ո.       |
| Ննջարանի կահ կարասի (մանրամասն. վերեւ)      | 2600        |
| Ճաշարանի » » » »                            | 3000        |
|                                             | 500         |
| <b>Գումար</b>                               | <b>6100</b> |

#### Գ. ՏԱՐԻ

|                                |             |
|--------------------------------|-------------|
| Դասարանի կահկարասի             | Գ. Ո.       |
| Ննջարանի եւ ճաշարանի կահկարասի | 2600        |
|                                | 3500        |
| <b>Գումար</b>                  | <b>6100</b> |

|                                       |              |
|---------------------------------------|--------------|
| Ա. Տարի առակերաց հմր. միանուագ ծախք   | 20500        |
| Բ. » » » » »                          | 6100         |
| Գ. » » » » »                          | 6100         |
| <b>Երեք տարուան համար՝ համագումար</b> | <b>32700</b> |

## Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ

### Ա. ՏԱՐԻ

(Դ. ՏԱՐԻ ՄՐԱԳՐԻՆ)

(Շաբաթական 3 ժամ)

Գիւղատնտեսութեան կարեւորութիւնը Հայաստանի Գաւառաց մէջ. — Գիւղատնտեսական Դասընթացքի մը օգտակարութիւնը գիւղական վարժարանաց մէջ :

Հող. — Մշակելի հողը կազմող մասերը. — Բաւերբեր եւ անբերրի հողերուն տարբերութիւնը. — Բոյսերուն սննդառութիւնը. — Հողերը բարելաւելու միջոցները. — Արտերը պարարտացնելու պէտքը եւ աղբերու գործածութեան ժամանակը. — Ընտանի անասնոց աղբերը եւ անոնց պահպանութեան եւ գործածութեան ընտրելագոյն եղանակները. — Եւրոպայի մէջ գործածուած քիմիական աղբերու մասին համառօտ տեղեկութիւն. — Հերկում, Արօր եւ անոր մասերը. — Սալարօրին առաւելութիւնը. — Մանկեւոյն կարեւորութիւնը. — Հնձման, քաղման եւ կալի մեքենաներ :

Մարդոց եւ անասնոց սննդեանը ծառայող

բուսոց մշակութեան եղանակը. — Այդ բոյսերը իրարու յաջորդեցնելու դրութիւնը և սորա առաւելութիւնը. — Հացահատիկներ (ցորեն, դարի, վարսակ, հաճար, եգիպտացորեն, թռչնակեր, կորեկ, բրինձ). — Ասոնց սերմերը մաքրելու և պատրաստելու կերպերը. — Սերմ գտող մեքենայից կարեւորութիւնը. — Անոնց գործածութեան եղանակը :

Մեկային հիւանդութեանց գլխաւորները (ժանդահարութիւն, ածխահարութիւն, փտախտ եւ բտախտ). — Ասոնց առաջքը առնելու միջոցները. — Արտին և շտեմարանին մէջ, հացահատիկներուն ամենէն աւելի փսա պատճառող միջատներ, ասոնք փնտցնելու գործնական միջոցները. — ձարտարարութեամբական բոյսեր (ծխախոտ, բամբակ, չուշմայ, խաշխաշ, կանեփ, փուշ, ճակնդեղ, և ըն). — Ասոնց մշակութեան եղանակը, հիւանդութիւնները և լղարմանները. — Մարդագետինք, բնական և արուեստական. — Գլխաւոր ճարակաբոյսք (առուոյտ երեքնուկ, իգիսար, և ըն). — Մարդագետինները ոռոգելու և պահպանելու կերպերը :

## Բ. ՏԱՐԻ

(Ե. ՏԱՐԻ ԾՐԱԳՐԻՆ)

(Շարքարակաւ 3 ժաւ)

Բանջարաւնշակութիւն. — Բանջարանոց մը հաստատելու եղանակը.

1. Իրենց տերեւներուն համար մշակուող բանջարներ (աղցաններ, կաղամբ, շոմին, թրթընջուկ, ծներեկ, և ըն) :

4. Իրենց սոխերուն և կամ ելունդներուն համար մշակուող բանջարներ (բողկեր, ստեպլին, չողգամ, սոխ, սխտոր, զանազան տեսակ գետնախնձորներ և ասոնց ձմրան համար պահպանման եղանակը (ensilage du maïs et autres) :

3. Իրենց հատիկներուն և կամ պտուղներուն համար մշակուող բանջարներ (դրուն, բակլա, լուբիա, սիսեռ, դդում, կանկառ, պատինճան, սսկեխնձոր, և ըն) :

Ասոնց ընտիր տեսակները և մշակութեան եղանակները :

Ծառաւնշակութիւն. — Պտղատու ծառերուն գլխաւորները (խնձորենի, տանձենի, սերկեւելի, նշենի, թզենի, ձիթենի, ընկուզենի, դեղձի, ծիրանի, և ըն). — Պտղաստան հաստատելու լուսագոյն եղանակները. — Ծառ տնկելու կերպերը. — Ծառերը յօտելու մասին համառօտ և ամփոփ տեղեկութիւն. — Աղուբայ, տաշտաթաղ և պատուաստ. — Տեսակները. — Մեկային գլխաւոր հիւանդութիւնք և ասոնց դարմանները. — Վնասակար միջատներ և ասոնք փնտցնելու լուսագոյն կերպերը :

Այգեւնշակութիւն. — Այգի հաստատելու եղա-

նակը. — Որթատունկը բազմացնելու կերպերը. — Որթատունկի գլխաւոր հիւանդութիւնք (մոխրախտ, միլտիւ, որթալուիծ). — Ամերիկեան որթատնկոց կարեւորութիւնը Թուրքիոյ մէջ. — Ասոնցմով այգի հաստատելու լաւագոյն եղանակը :

Անսառաքանութիւն. — Երկրագործ դասակարգին համար անտառաց կարեւորութիւնը. — Անտառները վնասէ զերծ պահելու պէտքը. — Վնասուած անտառները նորէն յառաջ բերելու գործնական միջոցները :

Գիւղացնեստական ձաւարարուեստից կարեւորութիւնը Կարնասնեստութիւն. — Կաթէն այլ և այլ կերպով օգտուելու եղանակները. — Մածուն և սեր պատրաստել. — Նոր դրութեամբ ընտիր կարագ շինել. — Պանրաշինութիւն և պանիրի եւրոպական թթուատներ (présure). — Լաւ պանիր պատրաստելու եղանակները :

Գինեշինութիւն. — Քաղցուին խմորումը. — Ճերմակ և կարմիր գինի պատրաստելու եղանակները. — Գինոյ կարեւոր հիւանդութիւնները, ասոնց առաջըր առնելու և դարմանելու լաւագոյն միջոցները. — Բէքմէզ և պուլամա շինելու կերպը :

Քացախաշինութիւն. — Ընտիր քացախ պատրաստելու եղանակը :

Բանջարեղէնի պահածոյներ պատրաստելու կերպերը :

Ասոնց կարեւորութիւնը :

## Գ. ՏԱՐԻ

(Զ. ՏԱՐԻ ԾՐԱԳՐԻՆ)

(Շաբաթական 3 ժամ)

Անասնաբուծութիւն. — Ընտանի անասնոց գլխաւորները, տեղւոյն և կլիմային համեմատ ասոնց կարեւորութիւնը. — Իւրաքանչիւրին սննդառութեան եղանակը և առողջական պայմանաց մէջ պահելու կերպերը, բազմացնելու էական եղանակները, ընտանի անասնոց ախտները, հիւանդութեանց գլխաւորները (ծաղիկ, պաղլեղ, կովերու և եգներու ժանտախտ, ոտքի հիւանդութիւններ, կատաղութիւն, և չն) : Այս հիւանդութեանց բնորոշ յատկութիւնները, ասոնց առաջըր առնելու համար զգուշական միջոցներ. — Ժահրի գործածութեան կարեւորութիւնը :

Մեղուաբուծութիւն. — Մեղուներու կեանքը և գործունէութիւնը. — Շարժական գրութեամբ շինուած նոր փեթակներուն առաւելութիւնը, ասոնց գլխաւորները, գործածութեան եղանակը. — Մեղրատու բոյսեր, մեղր և մեղրամոմ, մեղուններուն թնամիները, նոր գրութեամբ մեղուաբուծութիւն ընողներուն անհրաժեշտ եղող գործիքներ :

Շերամաբուծութիւն. — Շերամին կեանքը. — Թթաստան հաստատելու կերպը, — Առատ և ըն-

տիր խողակ առնելու միջոցները. — Շերամորդին  
գլխաւոր հիւանդութիւնները. — Շերամատանց հա-  
կանեխումը. — Բաւթէօուեան դրութեամբ ընտիր  
հունտ պատրաստելու եղանակը :

Հաւաքութեան շրջան. — Նոր դրութեամբ վառ-  
եակ հանելու և զանոնք կերակրելու եղանակներ. —  
Հաւաքեաց անունը, անոնց հիւանդութիւնները  
և դարմանելու միջոցները. — Նապաստակ պահելու  
գործնական եղանակը :

Երկրագործական Օրէնքներ. — Այս մասին  
մէջ պէտք է ամփոփել համառօտ տեղեկութիւն-  
ներ հողագործին անհրաժեշտ եղող կանոնադրու-  
թեանց մասին, որպիսիք են հետեւեալները.


Հողային, Տասանորդի, Երկրագործ. Դրամա-  
տան, Խճուղեաց, Որթալուիճի, Օամ. երկրաց  
մէջ որթալուիճէ վարակուած տեղեր տնկուած այ-  
գեստանաց, Բրինձի մշակութեան, Իւլ արտադրող  
վարդաստանաց, Շերամի և Թթաստանաց, Մաք-  
սատուրքէ զերծ եղող հողագործական մեքենայից,  
Ծխախոտի մշակութեան, Անտառաց տարափոխիկ  
հիւանդութեանց և Անտառաց մասին հաստատ-  
ուած Օրինաց կարեւոր կէտերուն ամփոփումը:

Ստորագրութիւն

ՎԱՀԱՆ ՍՈՒԻԷՆԵԱՆ      ԳԷՈՐԳ ԹՈՐԳՈՄԵԱՆ

ՀԱՅԿԱԶՆ ՊԷԿԵԱՆ

№17 Յուլիս, 1909, Կ. Պոլիս.



ՀՀ Ազգային գրադարան



NL0222809

53. 477